

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Մ. Գ. ՋՐԵԿԵԼԻ

ՄՈՒԱԿՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ

Բեմադրություն 4 պատկերով

Փոխագրեց՝ և. և Մելիք-Շահնազարյանց

ԴԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

891.71
\$ - 97

19 NOV 2017

№ 1 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԹԱՏՐՈՒՆ № 1

891.4-1

9-97

Կ

ՄՈԽԱԿՆԵՐԻ ԴԱՅՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՊԻՏԱԼԻՍՆԵՐԻ ՀԵՏ

ԲԵՄՍԴՐՄԱՅՈՒ 4 պատկերով
Ա. Գ. ՔՐԵՆԿԵԼԻ

Փոխագրեց՝ և ՍԵԼԻԲ-Շահազարյանց



ԹԵՏՈՎԱՆ ՀՐԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ - 1930

Անդամ

ՀՀ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐ.—Կապիկի գեմքով, ամուր ծնոտներ,
պլզած աչքերով, գլուխը քաշալ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Ուռած, փքած մարմնով, մհձ բերանով ու քթով,
գլուխը անմազ:

ԶԵՐՄԱԽԻՏԻ ՄՈԾԱԿՀ.—Անափելոս-գեներալ, շարժուն և ջղային:

ԶՈՐԱՊԵՏ (առաման).—Զերմախտի մոծակ, սառնարյուն:

ԹԻԿՆԱՊԱՀ.—Կոտրատվող ֆրանտ մոծակ:

ԾԵՐՈՒԿԿ ՄՈԾԱԿ.—Առանց բեխի ու վոտի:

ԱՌԱՋԻՆ ԵԳ ՄՈԾԱԿ } Գեներալի կանաքը, կոտրատվող,
ՅԵՐԿՐՈՐԴ ԵԳ ՄՈԾԱԿ } քրքրվող:

ԴԼԵԱՎՈՐ ԳՐԱԳԻՐ.—Գրգռված մաղերով մոծակ:

ԲԱՆՎՈՐՆԵՐ.—Կիզահողում (տորփառեղում)՝ չորս հոգի:

ՍՏԵՓԱՆ ՊԱՆԿՐԱՏԻՉ.—Փելդշեր 40 տարեկան, քիչ ճերմակ մա-
զերով, լուրջ գեմքով:

ՓԻՐԱՊՈՆՏԻՆ.—Գրուղացի ջառուահ կին 50 տարեկան, խորա-
մանկ, կնճռոտ գեմքով, գլխին աղլուխ:

I ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆ

II ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ

ԳԻՇԵՐԱՄՈՒԿ

Առաջին պատկերից հետո, նույն անձինք կարող են ուրիշ գեր
կատարել հետագա պատկերներում, ինչպես բանվորները և
մյուսները:

ՀՐԱՄ. № 1209

Գրառ. № 3053(բ). Տիրաժ՝ 3000. Գամ. № 244

Պետհրատի յիշկորդ տպարան Յերևանում.

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Բուրժուա մինխստրի առանձնասենյակը, Պատերից կախված են քարտեզներ յեվ հսկա թնդանոթների, զբահակիրների, աերոպլանների մողելներ. Պատերի տակ պահարաններ գրքերով ու թղթերով. Սեղանի վրա դրված են թնդանոթների, բոմբերի յեվ ուրիշ ռազմական զսրծիքների մողելներ յեվ խեղողող գազերի ու քիմիական հառագայթների նմուշներ.

Ցերեկո յե. առանձնասենյակը լուսավորված ե յելեկտրական լամպայով, սեղանի մոտ նստած ե կապիտալիստը յեվ մինխստը,

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Սիգարը ծխելով): Մոքներումդ պահեցեք, վոր բանվորներին վոչ մի զիջում չախտի անեք:

ՄԻՆԻՍՏՐ.—Հանգիստ մնացեք, քանի վոր այդ ձեզ ցանկալի չե: **ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.**—Դուք լավ գիտեք, վոր այդ աղքատներին հենց վոր մի փոքր զիջողություն եք անում, նրանք վոտներին առաջ են դնում և յերեք անգամ ավել են պահանջում: Նրանցից մի քաշվեք. փառք աստծու մենք գեռ սրածաւը խշտիկներ ունենք: Հենց վոր սկսեցին ցուցեր անել, գնդակահար արեք: Մի փոքր արյուն առնելը... հա... հա... հա իսկի մնաս չի տալ:

ՄԻՆԻՍՏՐ.—Հասկանում եմ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Կոմմունիստներին պետք ե վանդակում փակեր քանի այդ սատանաները աղատ են, իս չեմ կարողանում հանգիստ քնել. ամեն որ սպասում եմ, վոր նրանք մի նոր ոլին պիտի խաղան (բարկացած) նրանց մասին հենց վոր խոսք ե լինում, արյունս խառնը վում ե:

ՄԻՆԻՍՏՐ.—Կոմմունիստների վերաբերմամբ, յես ինքս ամենայն ուրախությամբ միջոցներ ձեռք կառնեմ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Ինչ վերաբերվում ե գերմանական հողերի բանագրավան, այդ մասին վոչ մի զիջում չի կարող լինել: Այդ խոզերից յոթը կամ պետք է քերթել...

ՄԻՆԻՍՏՐ.—(Քաղցր ժպիտով) Ամենայն ուրախությամբ:
ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Հանկարծ մտաբերելով) Ինքն ըստինքյան հաս-
 կանալի յե, վոր պետք ե քերթել բանվորների և գյու-
 ղացիների կաշին ել: Գերմանական կապիտալիստնե-
 րը մեր բարեկամներն են և դաշնակիցները, մենք
 նրանց հետ զլուխ կրելենք պատերազմը, նրանց հետ
 ել պետք ե բաժանենք մեր շահերը:

ՄԻՆԻՍՏՐ.—Հանգիստ մնացեք, մենք վոչինչ չենք տալ, գերմա-
 նական պրոլետարիատը իր կաշիլց կվճարի: Իսկ ինչ
 եք հրամայում Խորհրդային Ռուսաստանի մասին:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Թեփից բռնելով) Հենց վոր լուում եմ այդ ատելի
 հասարակապետության մասին, ատամիերիս ցավը
 բռնում ե: Հասկանալի յե, վոր չպիտի ճանաչենք
 բոյլշէիկ Ռուսաստանին: Յես պատրաստ եմ ցարական
 Ռուսաստանի հետ գործ ունինալ, իսկ հասարակապե-
 տական բանվորների, գյուղացիների հետո, ամենեին:

ՄԻՆԻՍՏՐ.—Իսկ յեթե հաջողվի նրանց կաշին կրկնապատիկ
 քերթել դեռ իրենց տոկոսներով...

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Այդ ուրիշ բան ե, փողի համար ամեն ինչ կա-
 րելի յե:

ՄԻՆԻՍՏՐ.—Հասկացա, մի հարց ել. այստեղ բելովարդեյցինե-
 րը դարձալ փող են պահանջում, դարձյալ մեծ գու-
 մարների պահանջ կա լենաստանի և Ռումինյան
 ռազմական պետքերի համար, Խորհրդային Ռուսաս-
 տանում հականեղափոխական ագիտացիա մղելու:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Բելովարդեյցիներին դեռ չտաք, թող սովոր
 մնան, բայց միուներին պետք ե ոգնել:

ՄԻՆԻՍՏՐ.—Դրա համար մեծ գումար ե պետք:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Ինչ ցավ, թող լինի. չե վոր մեր գրպանից չի
 գնում. մի յերկու ժամով կամ բանվորական որը կեր-
 կարացնենք, կամ նրանց որավարձը կքչացնենք: Կա-
 րելի յե մի հարկ ել հնարել զուղացիների վզին դնել:
 Միայն թե կարողանանք թե գերմանացիների պոչը
 կարել և թե Խորհրդային Ռուսաստանի անունը չնշիր,
 նրա հետքը կորցնել: Սիրելիս, դուք յերկուսի մասին
 հոգ տարեք, յեթե այզպես չանեք, յես ձեզ չեմ... (ա-
 ռանձնասենյակի անկյունից քվիցի ձայն ե լսվում,
 ինչու զերմախիսի մոծակի ձայնը):

ԶԵՐՄ. ՄՈԾԱԿԻ.—Մինիստր, մինիստր...

ՄԻՆԻՍՏՐ.—(Նայելով դես ու դեն) Մի ինչվոր բան ե լսվում,
 կասես մեկը ինձ կանչում ե (դառնալով կապիտալիստին)
 վստահ յեղեք, ամեն կերպ կաշխատեմ, յես նրանց
 հոգին կհանեմ:

Զ. ՄՈԾԱԿԻ.—(Հրամայողական) Մինստր, այ մինստր, լսիր,
 կԱՊԻՏԱԼԻՍՏ —իրոք մեկը ձեզ կանչում ե:

ՄԻՆԻՍՏՐ.—(Վեր կենալով) Զայնը կարծես այս անկյունից ե
 գալիս. մվ ե այնտեղ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Արդյոք մեկը մեզ չլսեց:

ՄԻՆԻՍՏՐ.—Այդ անկարելի յե. մվ կարող ե լինել:

Զ.-ՄՈԾԱԿԻ.—Հա, հա, հա, ինչ խելագարն եք (սզգալով բռչում ե
 դեպի բեմի առաջը): Յես չերմտենդի մոծակն եմ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Զարմացած) Ճիշտ եք ասում, մոծակ եք:

ՄԻՆԻՍՏՐ.—(Ավելի զարմանելով) Մոծակ և դեռ մարդկային լեզ-
 վով ե խոսում. այսքան տարի ապրել եմ, բայց աւ-
 պիսի բան չի պատահել ուղղակի զարմանք ե:

Զ.-ՄՈԾԱԿԻ.—Այստեղ զարմանալու բան չկա: Բարեկ քեզ բռւ-
 ժույ, բարեկ մինիստր: Յես շատ մեծ խնդիրքով եմ քեզ
 մոտ յեկել:

ՄԻՆԻՍՏՐ.—(Ճաղբարար) Ինձ մոտ, յես ամեն մի աղվզանի հետ
 խոսելու գլուխ չունեմ, յես պետական գործերով եմ
 զբաղված:

Զ.-ՄՈԾԱԿԻ.—(Հպարտ) Յես ել քեզ մոտ պետական գործերով եմ
 յեկած: (Կապիտալիստը յեկ մինիստրը սկսում են բարձ
 ծիծաղել):

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Հա՛հա՛, հա՛հա՛, ալ քեզ պետական գործով յե-
 կած անձնավորություն:

ՄԻՆԻՍՏՐ.—Հի՛, հի՛, հի՛, հի՛, (փորք բռնելով) վա՞ս ել չեմ
 կա... հի՛-հի՛-հի՛. սպանեց-հի՛-հի՛-հի՛:

Զ.-ՄՈԾԱԿԻ.—(Խոսիվ) Ի՞նչ ես բողազդ ճոթառում, անխելք, ա-
 սում եմ, վոր յես յեկել եմ հարկավոր գործով, ի՞նչ եք
 խրինջում, ուղղում եք վոր բարկանամ, կթոչեմ կգնամ,
 ինքներդ հետո կփոշմանեք:

ՄԻՆԻՍՏՐ.—(Ծիծաղը պահելով) Ասա, հարգելի, ճիշտն ասա, դու-
 ինչ թայփից ես, ազնվականներից ես, թե այն սեա-
 զգեստներից:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Տեղ մի արացե, չինի թե բոլցեկ ես:

ՄՈԾԱԿ.—ՅԵս...

ՄԻՆԻՍՏՐ.—Համ, համ,

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Դուռ:

Զ.ՄՈԾԱԿ.—Վորտեմդ են ձեր աչքերը: Ձեք աեսնում վոր յես ազ-
նվական եմ, այն ել վոչ հասարակ, այլ ջերմախտի մո-
ծակ և գեռ գեներալ: Նախցեք իմ նստվածքին և ինք-
ներդ կճանաչեք: Հասարակ մոծակները—այն սեազ-
դեստները, ճանձերի պես են նստում պատերի վրա,
փորները պատին կպցրած, իսկ իմ փորը և յետեկի իբրկու-
վոտները, վորովհետև ջերմախտի մոծակ եմ, միշտ
պատից հեռու և լինում (ցույց ե տալիս նստվածք),

ՄԻՆԻՍՏՐ.—Յեթե իրոք դու ազնվական ես և այն ել գեներալ
այն ժամանակ ընդունում եմ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Ո՛հ, կովան գեներալներին վորքան ևս սիրում:
ՄԻՆԻՍՏՐ.—Ասա, ինչ ես ուղում ինձանից հարգելի մոծակ:

Զ.ՄՈԾԱԿ.—Իմ քեզ մոտ գալու պատճառը այս ե. յես ու-
ղում եմ բոլշևիկների դեմ կովի դուրս գալ, նրանց
միջ մալյարի, ճանձալին ջերմախտ տարածել ինքու-
դիտես, թե ջերմախտը վորքան վտանգավոր հիվան-
դություն ե, քանի-քանի հազարավոր մարդկանց եմ
են մյուս աշխարհը ուղարկել (կապիտալիստը յեկ մի-
նիստը նորից սկսում են ծիծաղել),

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Մի սրան տես ինչ կովանն ե հա...
ՄԻՆԻՍՏՐ.—Մալյարին ծանր հիվանդություն ե, բայց այդ բա-
նում դու ինչ գործ ունես:

Զ.ՄՈԾԱԿ.—Ե՞ս թթամիտներ, չեք իմանում վոր՝ մալյարին յես
եմ տարածում, կծում եմ մալյարիայով հիվանդին,
նրա արյունից ծծում, այդ արյան միջի մայան տա-
նում մի առողջ մարդու կծելով նրա արյան միջ մըտ-
ցնում և ահա 10 որ չբաշած նա յել և հիվանդանում
մալյարիայով: Այսպես այդ մայան հիվանդից տանում
եմ վարակում առողջներին, ինչպես վոր վոջիլները
սիբնոյ տիփով հիվանդներին կծելով, փոխադրում են
վարակը առողջներին:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Այդ շատ լավ միտք ե:

ՄԻՆԻՍՏՐ.—Յեղբայր մոծակ, այդ շատ լավ ես մտածել. միայն
չեմ կարողանում հասկանալ, թե դու ինչի համար ես
ինձ գիմում:

Զ.ՄՈԾԱԿ.—Յես քեզ և թե սրան եմ դիմում նրա համար, վար-
մենք յերեքս ել մարդկային արյուն ծծողներ ենք.
միայն գուք յերկուադ խշտիկներով, պուլեմեաներով եք
դուրս գալիս, իսկ յես, իմ սեփական զենքով, իմ
խալթոցով:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Բարկացած) Դե, ձերդ գերազանցություն, ստեր
փշելու չափը իմացիր:

ՄԻՆԻՍՏՐ.—(Խիս) Գեներալ, լեզվիտ կապը քաշել, թե չե կխը-
փեմ:

Զ.ՄՈԾԱԿ.—Այս, կարող եք, բայց այդ ձեզ հաշիվ չե:

ՄԻՆԻՍՏՐ.—Ե՞ս, կասես չենք ճանաչում, մժեղ ես ելի:

Զ.ՄՈԾԱԿ.—Այս մժեղ եմ, բայց մեծ գործեր կարող և մանել, չե
վոր դուք չեք սիրում խորհրդային հասարակապետու-
թյուններին, Խորհրդային Ռուսաստանին, Անդրկով-
կասի հանրապետություններին:

ՄԻՆԻՍՏՐ.—Սատանան տանի նրանց:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Հուզված) Զհանգամի տակը գնան նրանք:

Զ.ՄՈԾԱԿ.—Առանց ձեր խոսքերին ել գիտեմ, վոր դուք ատե-
լով ատում եք դրանց, գիշեր ցերեկ թե քուն, թե ար-
թուն ձեր ուշն ու միաքը մենակ այն ե, թե ինչպես
ջնջել, նրանց հետքը կորցնել: Յեկ ահա մենք ջեր-
մախտի մոծակներս այդ բանը կարող ենք անել մալ-
յարիան տարածելով:

ՄԻՆԻՍՏՐ.—(Շատայ). Հետաքրքրական ե, խոզրեմ պատմիր, թե
ինչպես պետք ե այդ անեք, մենք լսում ենք:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Գրգռված) Յեթե իրոք մի հաստատ բան լինի,
առաջարկու, յես քեզ վոսկով կրեռնեմ, իսկ յեթե խա-
բում ես, չնեղանաս, կաշիդ կմաշիկմ:

Զ.ՄՈԾԱԿ.—Լավ, միայն դու (հազում ե) առաջ թող քո այդ
թամբաքուի ծուխ փշելը: Յես ծուխը չեմ կարողանում
տանել (հազում ե) հենց դրանով ե վոր ինձ խեղում
են կամ բնտկարաններից քշում: (կապիտալիստը հանգ-
ցնում ե սիզարը): Այժմ լսեցեք, մենք մոծակներս
շուտով ենք բազմանում, և շատ սերունդներ տալիս,
մեր մի եղ մոծակը ամառվա ընթացքում կարող և
մինչև 30 միլիոն ուրիշ եգեր առաջացնել: Հաշիցեք
թե ամառվա ընթացքում վորքան մոծակի զորք կա-
րող ե կազմվել. զլիսի յես ընկնում, պարոն մինիստր:

ՄԻՆԻՍՏՐ.—Այս, հասկանում եմ, յես չեյի կարծում յեղբայր մո-
ծակ, վոր դու այդպես խելոք ես:

Զ.-ՄՈԾԱԿ.—Յես յել գիտեմ, վոր խելոք եմ: Լսիր ինձ, Յեթե
մեկը ջերմախտով վարակվի, նա 7—10 որից կսկսի
դողացնել, տաքացնել 12 ժամ կչարչարվի հետո այն-
պես կըրանի, վոր քըտինքը կծլա: Քրտնելուց հետո
2—3 որ բաց կթողնի, հետո նորից կսկսի դողոցը,
այսպես կարող ե շարունակվել մինչև կմահանա, իսկ
չմահանալու դեպքում նա այնպես կհաւիլի, կմաշվի
վոր յերեխայի ուժ էլ չի մնալ վրան: Ասել ե խորհըր-
դային հասարակապետությունների մեջ յեթե մալյա-
րիան տարածենք այդ տեղերի բանվորներին ու գյու-
ղացիներին մենք շատ հողաբաժին տված կլինենք:

ՄԻՆԻՍՏՐ.—(Վոգեվորված) Այդ շատ լավ միտք ե. բանվորներն
ու զգուղացիները շատ են սիրում հողը, կարելի յէ
նրանց այնտեղ հողաբաժին տալ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Չարուրյամբ ձեռքերը օփելով) Ամեն մի դնչին
3 արշին տեղ, հե, հե հն...

Զ.-ՄՈԾԱԿ.—Այս, այդ յերեք արշին:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Քո արդ ծրագիրը գեներալ իսկ և իսկ իմ ու-
ղածն ե, յես շատ հավանում եմ այդ մտքին:

ՄԻՆԻՍՏՐ.—Ծրագիրը շատ յերելի յէ, միայն չգիտեմ այդ գոր-
ծում ինչ բանով կարող եմ քեզ ողնել

Զ.-ՄՈԾԱԿ.—Ասեմ, իսկույն կիմանաս: Մալյարիան ամենից
շատ վախենում ե խինինից, այդ զառը ճարից: Յեթե
մեկը այդ ճարը ներս ընդունի, նա մալյարիի վարա-
կի առաջը կառնի, նրան կիչացնի: Այժմ դու պարոն
մինխոտը, այս պարոնի հետ (ցույց տալով կապիտա-
լիսին) այնպես արեք, վոր խորհրդային հանրապե-
տությունները վոչ մի տեղից հնարավորություն չու-
նենան խինին ոտանալու, հասկանում ես: Յեթե բոլ-
շևեկը խինին չունենա, իսկ մենք սոծակներս նրանց
ձեռք առնենք, մալյարիից նրանց հետքն ու թիփուն
էլ չի մնար:

ՄԻՆԻՍՏՐ.—(Չարմացած) Եհե՛, յեղբայր, լավ գլուխ ունես, ա-
սենք թե մեեղ ես (ինացմունքով), յես քեզ գիներալ—
փելդմարշալի աստիճան կտամ և կառաջադրեմ շքա-
նշանի, աստված հավատա:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—(Բարեւարտուրյամբ) Դեներալ պատրաստ եմ ձեր
ծառայության, իմ գրամարկով միշտ բաց ե ձեզ
համար:

Զ.-ՄՈԾԱԿ.—Յես պատիվներից ու փողից չեմ հրաժարվում, մի-
այն մի պայման եմ դնում, հենց վոր բոլցիկների
հետ վերջացընք մեր գործը, թույլ տվեք ձեր անփո-
խաններին ել ձեռք առնել:

ՄԻՆԻՍՏՐ.—Մեծ հաճուչքով:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Հենց այսորվանից սկսիր քո գործը:

Զ.-ՄՈԾԱԿ.—Ասել ե համաձայն եք, ամենք ձեր ձեռքը, մասք
բարյավ, յես ժամանակ չունեմ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ.—Գնաք բարյավ, հաջողություն եմ ցանկանում:

ՄԻՆԻՍՏՐ.—Գնաք բարեյալ գիներալ, մեզ միշտ լուրեր ուղար-
կեցք բոլցիկներից ազատվելու մասին:

Զ.-ՄՈԾԱԿ.—Միամիտ կացեք. իսկ գուք մինչև այդ, արքայա-
կան աթոռի համար կանդիտատ պատրաստեցեք,
պետք ե շտապել:

ՄԻՆԻՍՏՐ.—Կանենք, կանենք:

(Մոծակը սզլվալով բոչում ե պատուհանից, մինիստրը ու կապի-
տալիստը բաշկինակներով նրան նանապարհ են դնում):

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Ւ. Ց. Ր

ՊԱՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Անտառի մեջ ճախճախուտ, ծառի քոթուկի վրա նստած են ցեր-
մախտի մոծակները—գեներալը, դրապետը (ատամանը), թիկ-
նապահը մի ծերուկ ինվալիդ մոծակ յեվ զրագիր:

ԳԵՆԵՐԱԼ.—(Ձերմախնի մոծակը) Հարգելի զրապետ, մենք ուսզ-
մական խորհրդում քննչեցինք իրերի գրությունը և
վճռեցինք մալյարիի ոգնությամբ Խորհրդագին նուևաս-
տանի դեմ պատերազմի դուրս գալ:

ՋՈՐԾՊԵՏԸՆ.—(Սառնարյուն) Լավ, լավ...

ԳԵՆԵՐԱԼ.—Առաջին ներթին վորոշել ենք կարմիր բանակայինե-
րին հարվածել. հայտնի յէ վոր կարմիր բանակային-
ները աշխատավոր դասի պաշտպան վահանն ու նի-
զակներն են և աշխարհի բոլոր պրոկտարիտատի հույ-
սը նրանց վրա յեւ Յեթե մենք նրանց կործանենք,

ասել և դործի կեսը արված և, դրա հետ միասին
կոկենք և բանվորների հախիցը դալ:

ԶՈՐԱՊԵՏ.—Եհեւ, դործի կեսը:

ԳԵՆԵՐԱԼ.—Մեր ծրագրին հավանություն և տվել բուրժուական
մինիստրը և կապիտալիստը: Մեզ հետեն ամբողջ աշ-
խարհի ջերմանդի մոծակները՝ թուրքեստանի և Ան-
դրկովկասի մոծակների բոլոր թագավորները մինչև
անգամ ինձ հրովարտակ են ուղարկել:

ԶՈՐԱՊԵՏ.—(Սառնաւուրյամբ) Ասում եք հրովարտակ եք
ստացել:

ԳԵՆԵՐԱԼ.—ԶԻ՞ք հավատում, պարոն, աստված վկա ուղարկել
են, թիկնապահ, առ կարդա, հրովարտակը:

ԹԻԿՆԱՊԱՀ.—(Հազում ե յել կարդում): ձեռորհրդային Ռուսաս-
տանի գեմ կավող մոծակների զորքի հրամանատարին:
Ուրախ ենք ձեր հաջողության, դործեցեք այսուհետև
ել փառ ջերմանդի և մոծակների զենքի: Հոգով ու
սրտով միշտ ձեզ հետ ենք: Մաղթանքներ ենք կատարում
ձեզ հաջողություն շնորհելումասին: Զորքով չենք կարող
ձեզ ոգնության դալ, մեր զլուխը խառնված ե, խոր-
հրդակին իշխանությունը խիսինով մալարիի հոգին
հուսումե, մեզ կոտորում ե ճահիճները չորացնելով և ճա-
հիճների վրա կերոսին վասելով: Մեր միակ հույսը
ձեր արյունարբու զորքի վրա է, շնորհում ենք ձեզ արո-
պիկական ջերմախտի առաջին աստիճանի չքանչան:
Իսկականի վրա նորին մեծության ձեռքով ստորա-
գրված ե թուրքեստանի ջերմախտի մոծակների վար-
չապետ: Անդրկովկասի ջերմախտի մոծակների վար-
չապետ:

ԳԵՆԵՐԱԼ.—Լսեցիք:

ԶՈՐԱՊԵՏ.—(Սառնաւուրյամբ) Եհեւ, լսեցինք:

ԳԵՆԵՐԱԼ.—Մենք մինչև ձեր ճահիճները յերկաթուղիով յեկանք
ապրանքային վագոններում նստած: Այժմ իսուքը ձե-
րըն ե, ձերդ վսիմափալություն:

ԶՈՐԱՊԵՏ.—Մեր ասելիքը պարզ ե: մենք մոծակներս այստեղ
ապրում ենք հանգիստ ու խաղաղ, ինչպես ապրել են
մեր պապերը և պապերի պապերը: Ամուսնանում ենք
սերունդ առաջացնում և մեսնում: Պետք չե աստծու

վրա բարկանալ, մենք վեց շաբաթվա կյանք ունենք,
շատ բան չե հարկավոր, միայն թե կեր ունենանք և
կանգնած ջրեր, վոր հնար լինի մեր եգերին նրանց
վրա իրենց զավակներին մեծացնել: Գեներալ, պատե-
րազմի դուրս գալ մենք հարկ չենք համարում:

ԾԵՐՈՒԿ. ՄՈՌԱԿ. — Հիշե՛հը՛ը՛, (հազում ե) Յես ել նույնն եմ
ասում, յեթե բոլցեկների դեմ կովի դուրս գանք, մեր
գլխին չարիք կգա: Նրանք չախմախաքարի պես շատ
պինդ են: Այս հինգ տարվա ընթացքում վորքան բե-
լագիւրդիցիների զլուխը կերան, ըհը՛ըհը՛-ըհը՛:

ԳԵՆԵՐԱԼ.—Լսիր, ինչպես ես համարձակում: Քո այդ մտքերիդ
համար գիտես քեզ ինչ կանեմ:

ԾԵՐՈՒԿ. Մ. — Եո կամքն ե գեներալ ինձ թելադրում և իմ իիդ-
ճը և քեզ սիրելուց հմ խորհուրդ տալիս, վոր բոլցե-
կներին ձեռք չտաս:

ԳԵՆԵՐԱԼ.—(Թիկնապահին) Տար սրան կորցրու, վորտեղ հարկա-
վոր ե: (Թիկնապահին տանում ե ծեր մոծակին): Լավ պտուղ
ե: Ինչպես յերկում ե սա յել ե բոլցեկներից վարակ-
վելախր վորտեղ չեն նրանք իրենց քիթը խցկում: (Ծա-
ծուկ) Յես հուսով եմ, հարգելի զրոապետ, վոր դուք կփո-
խեք ձեր վորոշումը: Յես յեկել եմ ձեզ մոտ լիտոր-
ված համայն աշխարհի կապիտալիստների կողմից:
Ինչ վոր չեն կարող անել կապիտալիստները և նրանց
ստրուկները, մենք մոծակներս կանենք: Մենք պետք
ե կործանենք աշխարհի պրոլետարիտատի բոլոր բան-
վորների և գյուղացիության պաշտպան հասարակա-
պետությունները և ձեզ հետ, զորապետ, համայն աշ-
խարհում հոչակ ստանանք:

ԶՈՐԱՊԵՏ.—(Փոհ) Այս, այս, այս...

ԳԵՆԵՐԱԼ.—(Նողոքորելով) — Ձեզ պես մեծ հերոսի հետ մենք
ջերմախտով կվարակենք ամբողջ Խորհրդային Ռու-
սաստանը, Անդրկովկասը, ամեն տեղ մենք վուի
կկանգնեցնենք մոծակներին:

ԶՈՐԱՊԵՏ.— Եեթե միայն յես ցանկանամ...

ԳԵՆԵՐԱԼ.—Այստեղ, ձեր յերկիրը, կարելի յե ասել Ռուսաստանի
մոծակների կենարուն ե, այստեղից ել պետք և սկսենք
ձերդ մեծափալլություն մեր հարվածը բոլցեկներին.
ձեզ վրա յեն դրել իրենց հույսերը ամբողջ աշխարհի

և Ռուսաստանի զարդ ու պարծանք բելոգվարդեցիները:

ԶՈՐԱՊԵՏ.—(Հիմացած) Այս, մեղ վրա... այդ յես գիտեմ, բայց յեթե յես ցանկանամ... ո՞հ, ո՞հ, ո՞հ յես:

ԳԵՆԵՐԱԼ.—Ճիշտ եւ Վորոշիցեք զորապետ, ամբողջ աշխարհի կապիտալիսամների բախտը այժմ ձեր թաթերի մեջն եւ:

ԶՈՐԱՊԵՏ.—Իսկ դուք ցանկանում եք, վոր իմ մոծակներին յես տանեմ Մոսկվայի վրա:

ԳԵՆԵՐԱԼ.—Յես չեմ ուզողը, այդ պահանջում եւ ձեզանից մարդկության ոգնելու կարիքը:

ԶՈՐԱՊԵՏ.—Թող ձեր ասածը լինի, միայն տեսեք, յեթե այդ կովից շահ ունենանք, պետք եւ կիսենք:

ԳԵՆԵՐԱԼ.—Այդ իրեն կարգով կինի, ո՞հ, ավեք ձեր ձեռքը:

ԶՈՐԱՊԵՏ.—(Բդավիելով) Եյ զրագիր (մէնում ե զուլսը սմբամբացնելով մի արբած մոծակ, զորապետի գրազիրը):

ԴՐԱԳԻԲ.—Յե... յե... յես յեկա. ձերդ մեծափայլություն, (զոկրուալով) ինչպես վոր տերեւ խոտերի ա-ա-ռաջ (զկրտում ե):

ԶՈՐԱՊԵՏ.—Ելի կոնծել ես:

ԴՐԱԳԻԲ.—(Բերանը ճածկելով) Զե, չե... (զկրտում ե) այդ թարմ ո-ոթ-ոթիցն ե (զկրտում ե)

ԶՈՐԱՊԵՏ.—Ես յես քո այդ բեխերը տակից կկարեմ, ոու չափից դուրս ես խմում, յեթե այդպես շարունակես, տակին ինձ համար բան չի մնալ:

ԴՐԱԳԻԲ.—Վողորմեցեք մեծափայլ տեր (զկրտում ե) յես իմ ծնած որից բերանս գինի չեմ զրել. բայց յեթե գինու հոս ե դալիս այդ զեռ իմ փոքր հասակից ե ինձ վրա յերեացել:

ԶՈՐԱՊԵՏ.—Եկզիտ կապը քաշիր, առ գրիչը և մի ընդհանուր հրաման գրիր:

ԴՐԱԳԻԲ.—Ընդհանուր հրաման... այդ կարող եմ, կարող եմ (զկրտում ե) շատ լավ, կգրեմ, (զկրտում ե, նսում ե յեվ ականչի վրայից հանում ե գրիչը): Վողորմությամբ աստծո մեք զորապետ... (դառնալով զորապետին) ինչ բանի մասին պետք ե լինի,

ԶՈՐԱՊԵՏ.—Զինվելու և պատերազմելու. առաջին հերթին Մոսկվայի հետ կինի մեր կովը:

ԴՐԱԳԻԲ.—Կոիվ, —ո՞հ... ինչ լավ կլինի, ամմա ինչքան խալովաներ կկոտորվին հա... (գրում ե):

ԳԵՆԵՐԱԼ.—Զեզ փառք ու հարսառություն ե սպասվում:

ԶՈՐԱՊԵՏ.—Ուրախ, բեխերը վոլորելով) Այդ մասին մաղթանք կկատարենք և պատերազմի դուրս կգանք...

ԴՐԱԳԻԲ.—(Գրում յեվ ասում) Իսկ յեթե մեր հրամանը մեկը չկատարի, նա կենթարկվի... (զկրտում ե բոււնցիքը ցույց տալով):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Ց Ր

ՊԱՏԿԵՐ ՅԵՐՐՈՐԴ

Ճախճախուաներում բանվորների տնակներ, կեսոր ե, թախտերի վրա պառկած են մի քանի զերմախտով հիվանդներ, մեկը տաքության մեջ շուռումուռ ե գալիս, մյուսները կանգնած են, միքանիսն ել քիչ կազդուրված, թուլացած պառկած են անտարբեր:

I ԲԱՆՎՈՐ.—Զնւր, ջնւր, ներսս ալրվում ե, ջնւր.

II ԲԱՆՎՈՐ.—Համբերիր յեղբայր:

I ԲԱՆՎ.—Զեմ կարող, այրվում եմ, ջնւր:

II ԲԱՆՎ. Այս ըոպեյին, այս ըոպեյին համբերիր (իջնում ե քախտից յեվ դիմբիքալով զուր ե բերում հիվանդին) առ սիւհիս, խմիր. (ձեռք դնելով հակատին) վա, ինչպես տաքացրել ես:

I ԲԱՆՎ. (Խմում ե պահաբար) Շնորհակալ եմ Պողոս, վատ եմ զգում, յերկի կմեռնեմ:

II ԲԱՆՎ.—Վոչինչ յեղբայր, շուտով կըրտնես, կառողջանաս, յերկու որից, քեզ շերմը բաց կթողնի:

I ԲԱՆՎ.—Ես քանիկերորդ անգամն ե, վոր զողացնում եմ. այս անիծված ջերմահնդի վերջը չեմ տեսնում:

II ԲԱՆՎ.—Ի՞նչ ասեմ, ջերմահնդը հանաք անել չե սիրում. յեւ ել յերեք ամիս ե վոր տանջվում եմ:

I ԲԱՆՎ.—Ա՛յս մի շուտով գար են ջինդար Մարգուշը, նա կարող ե ես աղարից աղատել:

II ԲԱՆՎ.—Իզուր ես նրան կանչել. նրա ջինդարությունից բան չի դուրս գալ նա մարդերանց աչքին թող ե փչում:

- I ԲԱՆՎ.—Շատերն են ինձ խորհուրդ տվել, յես վոչ թե Մարգուշին, այլ նրա են բող եղին ել զլուխ կտամ, թե վոր նա ինձ ողնի,
- II ԲԱՆՎ.—Հա, դե, նա լեկավ, տեսնենք (մտնում ե մի պառակ քաջինակը գլխին),
- ՄԱՐԳՈՒՅԾ.—Բարե ձեղ իմ աչքի լույսեր, իմ բալեք, վարտեղ ե հիվանդը;
- I ԲԱՆՎ.—Բարե տատիկ. այդ յես եմ քեզ կտնչել. մեռնում եմ, մի ճար արա, ջերմանդը ինձ տանջում ե.
- ՄԱՐԳՈՒՅԾ.—Տեսնում եմ տղաս, թե ինչպես ե քեղ կերեւ (նայելով աշերին ու ձեռքը նակատին դնելով): Ի՞նչ եմ տեսնում, քսան քուրերից տասը քեղ վրա յեն հավաքվել...վոչինչ, ես նրանց մի շնչով դուրս կհանեմ:
- I ԲԱՆՎ.—Աստուծու սիրուն, խնդրում եմ... իմ վերջին կոպեկն ել չեմ խնայիլ:
- ՄԱՐԳՈՒՅԾ.—Հույսդ մի կտրիր, դե նստիր վորդի, հա, այդպես. (դառնալով մյուսներին) դե ոգնեցեք վոր թախթի վրա նստի. Անունդ բնչ ե:
- I ԲԱՆՎ.—Պողոս:
- ՄԱՐԳՈՒՅԾ.—Դե լսիր Պողոս, ինչ վոր յես ասեմ, դու յել իմ հետեից կրկնիր.
- I ԲԱՆՎ.—Լավ, տատիկ, (մնացած բանվորները նստում են կամ կանգնած քախսերի վրա յերկուդով յել նետքրությամբ նայում են պառավինի):
- ՄԱՐԳՈՒՅԾ.—(Առաջ սկսում ե ձեռքով կանոնավոր նետո ավելի խառն շարժումներ անել, ծուռ ու մօռո կլոր շշանակներ զծել, սդի մեջ փալքիական նեաններ գրել, փշում, հիվանդի վրա, նետո յերգելով ասում)՝ Ովկիանոսի ծովի մոտ կորկոլիստ ծառն ե կանգնած. կորկոլիստ ծառի վրա Շիլ-Մարութն ե նստած և նրա ոգնական մեծ Դուկասն ու Պողոսը. խնդրում եմ ինձ ասեք, այ Պողոս-Լուկաս, ինչո՞ւ համար են ովկիանոս ծովից տասներկու քավթառներ դուրս յեկել քծըծված մազերով, կրակ կտրած, չանթաները բաց, տատմները սրած իրենց մյուս քուրերի հետ: Ինչո՞ւ ին նրանք յերկրից յերկիր թափառում, մարդկանց քունը խանդարում, իշտահները փակում, արյունները ծծում, ջերը քաշում, սկ թոքը ծակոտում, վոսկորները սղո-

ցում, հոգիները հանում: Ասացեք նրանց այստեղ նը-
րանց կենալու տեղը չե:

Դե, ոտղ ըլեք, գնացեք ճահիճները, խոր լճերը, վաղկան ու կանգնած ջրերը, խորլ անտառները, այն-
տեղ ձեզ համար ընտիր մահճականեր կան, փետուրնե-
րից ու բմբուլներից անկողին, շաքարեղեն, մեղրահամ
խմիչքներ: Ձեզ համար այստեղ լավ բնակարաններ
կտն, հենց այս ժամին, հենց ես րոպեյին մի ուշա-
նաք, գնացեք...

Իմ ասածը ասած ե... դե. հայդե... շուտ... (ձայնը
նեսգիետե բարձրացրած հասցեում ե խլխալու, հեվանդ-
ները վախով նետելում են երա ոյինբազաւրյաններին):

I ԲԱՆՎ. Տատիկ... վատ եմ զգում, ել ուժ չունեմ, չեմ կարո-
ղանում նստել:

ՄԱՐԳՈՒՅԾ.—Այդ վոչինչ, նրանից ե, վոր ջերմանդի քուրերը
քեղանից սկսում են դուրս գալ:

I ԲԱՆՎ. Վայ—մեռա...

ՄԱՐԳՈՒՅԾ.—Առ խմիր ես իմ շինած ճարը (տալիս ե երան ժիշի
մեջ մի ինչ վոր նար) առ խմիր իսկ իմ վարձը տուր,
յես գնում եմ:

I ԲԱՆՎ.—(Դողդոջ ձեռքերով բարձի տակից հանում ե փողը յեվ
տալիս պառավինի). Ստացիր տատիկ, չնեղանաս.

ՄԱՐԳՈՒՅԾ.—Քիչ ե, վորդի, յես քեզ...եհ, լավ թող այդ լինի
(գնում ե):

ԲԱՆՎ.—Ցեղալյըներ ջուր տվեք, մեռնում եմ.

II ԲԱՆՎ.—(Զուր տալով) ի գուր ես այդ ջինդարին կտնչել. յեթէ
ֆելքերը իմանա, քեզ վրա պետք ե բարկանա:

I ԲԱՆՎ.—Դուք այդ մասին նրան բան չասեք:


III ԲԱՆՎ.—Ահա և ֆելքերը դալիս ե:
ՖԵԼՃԵՐԸ.—(Մենելով) Բարե, բարեկամներ, հը բնչովես ես Պողոս
(զանազան տեղերից) վատ ե, ծանր ե.

I ԲԱՆՎ.—Իմ բանը բուրդ ե, մեռնում եմ:

ՖԵԼՃԵՐԸ.—Հանաք ես անում յեղբայր. (բոնելով ձեռքը) տես,
յերկու ժամից հետո կանցնի տաքությունդ:

I ԲԱՆՎ.—Սիրտս սաստիկ տալիս ե. աչքերս մթնում են:

ՖԵԼՃԵՐԸ.—Սըս կաց, սիրելիս, քեզ չուտով հիվանդանոց կփո-
խադրենք:



III ԲԱՆՎ.—Պետք ե ալսաեղից փախչել. հոգեհան տեղ ե, այ տես-
սեք են թխպերը. դրանցից ե առաջանում ջերմտենդը,
դրանցից ել մարդու արյունը ժանդուում...

ՖԵԼԻՇԵՐ.—Ընկեր, դատարկ ես խոսում, ջերմտենդը վոչ թե
թխպերից ե առաջանում, այլ մոծակներից:

II ԲԱՆՎ.—(Հավատ չնձայելով) Դրա մասին մինք լսել ենք, իբր թե
մոծակներն են հիվանդներին կծելուց, նրանց ջերմի մա-
յան տանում են առողջների արյունի մեջ մտցնում.
բայց յես կարծում եմ վոր դրանք դատարկ խոսքեր
են. քանի քանի տարիներ ինձ մոծակները կծել են.
բայց յես ջերմտենդով չեմ հիվանդացել, իսկ այստեղ,
այս ճախճախուտներում տեսնում եք հիվանդացել եմ:
ՖԵԼԻՇԵՐ.—Բարեկամո, ամեն մոծակից չեն հիվանդանում. տրո-
պիկական ջերմտենդը փոխադրվում է մի առանձին
տեսակ մոծակների միջոցով: Առաջ քեզ կծոտել են սո-
վորական մոծակները, իսկ այստեղ մալյարիի մոծակ-
ները, դրանից ել դու հիվանդացել ես:

II ԲԱՆՎ.—Թող քո ասածը լինի. ինձ համար վողջ մեկ եթե ինչ
բանից են հիվանդանում, մոծակից, թե թխպերից,
միայն այս դիտեմ, վոր մեր ընկերներից կեսը այստեղ
ջերմտենդ են ստացել:

ՖԵԼԻՇԵՐ.—Դրանում դուք ինքներդ եք մեղավոր: Քանի քա-
նի անգամ ձեզ ասել եմ, ելի յեմ ասում, վոր արե-
վը մայր մանելուց հետո բաց ողում չմնաք: Ինքներդ
գիտեք, վոր մոծակները յերեկոներն են սկսում իրենց
թոիչքը, իսկ դուք նրանց ուշ չեք դարձնում: Ձեզ
խնդրել են, վոր քննելուց առաջ ծուխ տվեք ձեր բնա-
կարանը, վոր մոծակները փախչեն, բայց այդ ձեզ
դուք չի գտիս, իբր թե աչքներդ ծուխով լցվում
ե: Ձեր պատուհանները ցանցով, թանձիփով ծածկել
են, վոր մեծակները ներս չմտնեն. բայց դուք ցան-
ցերը հանել եք, ասելով վոր սենյակը մթնում ե:

II ԲԱՆՎ.—Ճիշտ ե, ճիշտ ե ասել եք ընկեր ֆելշեր:

ՖԵԼԻՇԵՐ.—Ձեզ խինին են տվել, խոսել, բացարեր, վոր յեթե
խինին ընդունեք նա առողջներին ջերմելուց կպահ-
պանի, իսկ հիվանդներին ել կրծշկի. իսկ դուք թնչ
եք արեւ խինին ընդունել եք, ով վոր ձեզանից ըն-
դունել ե, նա ել մինչև ալսոր առողջ ե մնացել:

III ԲԱՆՎ.—(Քաւլած) Ոհ, ինչքան դառն ե այդ խինինը, նզո-
ված լինի դա.

ՖԵԼԻՇԵՐ.—Դառն ե, իսկ դուք ուզում եք ամեն բան քաղցր լի-
նի: Այժմ ջերմտենդի քաղցրությունն եք վայելում:

II ԲԱՆՎ.—Ձեր ասածը ճիշտ ե, ընկեր ֆելշեր, մենք տպետ ենք,
չենք հասկանում:

ՖԵԼԻՇԵՐ.—Մեծ գործ կատարած կլինեք, յեթե մալյարիի դեմ
խելքով գործեք: Դրանով թե զուք ազատված կլինեք
այդ հիվանդությունից, թե ուրիշներին պահպանած:

II ԲԱՆՎ.—Այստեղից քիչ հեռի գտնվում է յերկաթուղու բան-
փորների գյուղը. անցրալ որը ես գնացի այնտեղ և
ճիշտ եմ ասում ամեն մի բանվորի տան մեջ մահճա-
կալի վերակից միրչաքտան եր կախված. յես տեսնե-
լուց ծիծաղս լիկավ, Հարցը ինչի համար են գբանք,
անձրիկ պաշտպանվելու թե ինչ բանի: Նրանք ինձ
պատասխանեցին,—մալյարիի մոծակներից պաշտպան-
վելու համար ենք կախել:

ՖԵԼԻՇԵՐ.—Ճիշտ ե, այ, տեսնում եք, յերկաթուղու այդ բան-
փորները դոչչաղ են, նրանց իրենց մոտի ճահճներն
ել են գորացնում, վորովհետեւ գիտեն, վոր մոծակները
չոր տեղերից քաշվում են. այդ բանվորները կանգնած
ըների յերեսին կերոսին, կամ սև նավթ են ածում
վառում այնտեղ ջրի յերեսին մոծակների վորդերին
այրում փաշցնում: Դուք ել պիտի ե նրանցից որի-
նակ վերցնեք, նրանք գրագետ են, կարգում են ոգըտ-
վում են զրքերի խրատներից, բան սովորում:

III ԲԱՆՎ.—Սպասիր, յեղբայր, հերթը մեզ ել կզատ:

II ԲԱՆՎ.—Ճիշտ ե, ցարական կառավարության ժամանակ մենք
աչք բաց անելու ժամանակ չունեցինք, իսկ խորհրդա-
լին իշխանության ժամանակ...

ՖԵԼԻՇԵՐ.—Այդ նրանից ե, վոր առաջ աշխատավոր ժողովրդի
առաջ գիտության դռները փակված ենին, իսկ այժմ,
յեթե զյուղը ինչպես հարկն ե զրածանաչ դառնա, նա
վոչ թե ջերմտենդի, այլ իր բոլոր ցավերին վերջ կը-
տառ:

III ԲԱՆՎ.—Յես ել եմ ասում այդպես կլինի, քանի վոր մեր
նոր տերությունը աշխատում, հոգս ե տանում այդ
մասին:

I ԲԱՆՎ.—Վայ, ոգնեցեք, ուշ գնում ե... մեռնում...եմ: Աւոյ,
ո՞ւր, ո՞ւր:

ՖԵԼԻՇԵՐ.—Խնչ և բարեկամս, ելի դողոցդ բռնեց:

I ԲԱՆՎ.—Ներս այրվում ե... չեմ կտրողանում, ձեզ մատաղ ոգ-
նեցեք...

ՖԵԼԻՇԵՐ.—(Բոնելով զարկերակը) Ճիշտ ե, մի ինչ վոր վատ բան
ե կատարվում քո մեջ:

I ԲԱՆՎ.—Աղիքներս շուռ են գալիս...վայ ծակում ե... այդ ա-
նիծած քավթառը ինձ թունավորել ե. ընկերներ...եռ
մեռնում եմ:

ՖԵԼԻՇԵՐ.—Քեզ ով ե թունավորել, Պողոս, ճիշտ ասաւ:

II ԲԱՆՎ.—Մի ջինդար յեկալ, թալիսման արեց, խմելու ել մի
բան տվեց:

ՖԵԼԻՇԵՐ.—(Բարկազած) Ահա ձեզ տգիտության պառուղը, այս
մարդը թե իր և թե ձեր հիմարության շնորհիվ կոր-
չում ե:

I ԲԱՆՎ.—Ընկեր ֆելիշեր, մի ճար, քեզ մատաղ, մի ճար ներս
այրվում ե...վայ, վայ...

ՖԵԼԻՇԵՐ.—Ոգնեցեք տղերք, ձեզանից վորը ուժեղ և վերց-
նենք հիվանդանոց տանենք. կարող ե այստեղ մեռներ
(Հիվանդերի ոգնուրյամբ Պողոսին դուրս են տանում.
լուրյանի):

II ԲԱՆՎ.—Ա՛յ, քեզ ջինդար, լավ բժիշկ ե:

III ԲԱՆՎ.—Ֆելիշերը ճիշտ ե ասել. այդ ջինդարները ժողովի
խարեւաներ են, ինչպես և փալչիները, շառուահները:
(Վագելով մտնում ե մի ջանել բանվոր):

ԶԱՀԵԼ ԲԱՆՎ.—Յեղբայրներ, վոր իմանաք ինչքան մոծակներ
են յեկել չգիտեմ վորտեղից, կծոտում արյունները
խմում են, ուղղակի լացացնում. կարծես մոծակների
դոշուն ե, նրանցից պրծում չկա:

III ԲԱՆՎ.—Յես ասացի վոր այստեղ մարդ կկորչի, պետք ե հե-
ռանանք:

II ԲԱՆՎ.—Վարտեղ գնանք, գնալու տեղ չունենք. տղերք վեր
կենանք այդ մալարիի, մոծակների հետ ինչպես հար-
կըն և կովենք: Վոչ բելովարդեցիները և վոչ մո-
ծակները չեն կարող մեզ հաղթել, յեթե ամենքս հա-
մախմբված գնանք մեր բանվորացուղացիական իշ-
խանության ոգնութեան:

ԱՄԵՆՔՆ.—Կպնանք, կպնանք մեր կլանքը կպնենք: (Մտնում ե
Ֆելիշերը):

II ԲԱՆՎ.—Ընկեր ֆելիշեր, ինչպես և հիվանդի առողջությունը
ֆելիշեր. — (Տխուր) մեռաշուկ... (Խոր լուրջուն):

Վ. Ա. Ռ Ա. Գ Ո Ւ Յ Բ

ԶՈՐՅՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Մեծ դաշտավայր, յերկու կարմիր բանակայիններ լճի մոտ
կանգնած են զրմուղ մեքենաներով. գյուղական քեմի յետեվը
և յիկ և բանակայիններ: Հետո գիշերամուկը:

I ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ.—(Բեմի յետեվից կանչում է) Ընկերներ,
աշխատեցեք վոր առուն հավասար փորփի, ջուրը կանգ
չառնի, լավ հոսանք ունենա, իսկ մենք նասոսով ջրի
իրեսը կերոսինով կծածկենք.

II ԿԱՐՄԻՐ. ԲԱՆ. — (Բեմի յետեվից ուրիշ ձայն կարմիր բանակայինի)
Լավ դու նասոսը բանի ձգիր. ենպես չորացնենք ես
ձահիճը, վոր քեփդ զա, ել մոծակը շատանալու տեղ
չի ունենալ:

I ԿԱՐՄԻՐ. ԲԱՆ. — Սկսենք յեղբայր:

II ԿԱՐՄԻՐ. ԲԱՆ. — Տուր. (յերկուսն ել սկսում են բանեցնել նասո-
սը: Մոտենան ե մի զյուղական):

ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Բարով ընկերներ:

I ԿԱՐՄԻՐ. ԲԱՆ. — Բարով բարեկամ:

ԳՅՈՒՂԱԿԱՆ. — (Չիրովալ բրուրունով լցնում, սկսում ե ծիսել) նա-
յում եմ ձեզ վրա, ընկերներ, բայց խելքս բան չի
կարում թե ինչ եք անում.

I ԿԱՐՄԻՐ. ԲԱՆ. — Լճի մեջ կերոսին ենք թափում:

ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Ուզում եք լիճը այրել, ինչ ե, ամմա ինչքան
խաչած ձուկ կստանաք հա՛, (Բանակայիններ ծիծա-
ղում են):

II Կ. ԲԱՆԱԿԱՅԻՆ. — Ամմա լավ ասացիր հա՛, չե յեղբայր մի
քիչ սխալված ես, ջրի մեջ կերոսինը ածում ենք, վոր
վասինք, մոծակների ձուաները կոտորենք:

ԳՅՈՒՂԱՑԻՆ. — (Կասկածանիով) Զե, չեմ կարծում, ձեր արածը դատարկ բան ե, յերկի կերոսին ածելու տեղ չունեք:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Ցեթե գու բան չես հասկանում, ուրիշից հարցրու, ինչու յես իզուր տեղից լեզուդ բլրթնում:
 ԳՅՈՒՂԱՑԻՆ. — Ցես ձեզ եմ հարցնում, ինչի համար ե:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Արդյոք կյանքումդ լսթլ ես, վոր մոծակներին են ջերմտենդը տարածում:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Լսելով լսել եմ, բայց իմ կարծիքով, դա յերեխի դրուց ե:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Թեզ մեկն ու մեկը ասել ե վոր մոծակները կանգանած ջրերի վրա յեն իրենց ձուերը դնում, ճախճախուտներում շատանում, ձագեր տալիս:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Լավ, ասել են, բայց յես...
 I Կ. ԲԱՆԱԿ. — Բայց դու ականջիդ քամակն ես ձգել. պետք է գլխումդ մտցնեյիր, վոր եզ մոծակները կանգնած ջրերի վրա յեն դնում իրենց ձուերը, իսկ դրանցից դուրս են գալիս վորդերը:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Լավ դրանցից քեզ ինչ փաս ե հասնում:
 I Կ. ԲԱՆԱԿ. — (Խստիվ) Խոսքս մի կտրիր, յեթե.
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Լավ, լավ, ասա...
 I Կ. ԲԱՆԱԿ. — Այդ վորդերը միքանի որից հարսնուկ են դառնում, կերպարանքը փոխում, թուչկան մոծակներ դարձած, ջերմտենդը տարածում:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Վահ, ասել ե դրանք նման են շերամի վորդին, վոր ձուերս են գալիս, թթի տերեկներով ապրում մեծանում բոժոժ շինում, մեջը փոխվում հարսնուկ դառնում, հետո միքանի որից թիթեռ դարձած դուրս գալիս ձու դնում:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Հենց ալպես ե, քանի վոր վորդերը ջրի մեջ լողում են, նրանց շունչ քաշելու համար ոդ ե հարվոր, բայց յերբ ջրի վրա յես կերոսին եմ ածում, նրա մարմինը ծածկվում ե լուղալի փառով, ել չեն կարողանում ոդ ծծել սատկուում են,
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Տես, հա եզ ինչ լավ բան ես հնարել:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Ցես չեմ հնարել, գիտնական մարդիք են հնարել իսկ մենք առուներ ենք վորում, ջրի խողովակներ դնում, ճիմակալած փոքրիկ գետերը, ջրառունները մաքրում, հոտած ջրհորները հողով ծածկում ե ալդ

բոլորը նրա համար, վոր ձահճները չորանան, մոծակները բուն դնելու տեղ չունենան: Ցերբ մոծակները փշանան, մեզանում ել ջերմտենդի չի լինի հասկացիր:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Այս, գլուխս մտավ. իսկ դուք լեզբայրներ, ինչպես յերեւում ե ջերմտենդի համը առել եք, մոծակների հետ կոփ մղելուց:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Սխալվում ես բարեկամ, մենք չենք հիվանդացել:
 II Կ. ԲԱՆԱԿ. — Մենք մալյարիայից ապահովագրաված ենք, մեզ ստրախավատ են արել:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Ցերկի գուք գիր անել գիտեք կամ ենպիսի աղոթք եք իմանում, վոր ջերմը ձեզ չի մոտենում:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Ամմա յետ եք մնացել գուք հա՛, գեռ ելի ջինդարի, փալչու խոսքերին եք հավատում:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Բաս ինչ անենք առանց դրանց կարելի յե մի բան անեմ:
 II Կ. ԲԱՆԱԿ. — Մենք ել եղալիսի բաներ գիտենք, ուզում ես քեզ ասեմ:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — (Վոզեկորված). Ասա, ասա, շնորհակալ կլինեմ:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Ինչի չասել քեզ պես լավ մարդին, յես կասեմ բայց դու պահիր մտքիդ:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Վատահ յեղեք, միտս կպահեմ:
 II Կ. ԲԱՆԱԿ. — Այդ խինին ե:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — (Հիսորափիված) Ինչ-պես, խի-նի ե. ետ են գառը փոշին չե, վոր հաքիմները տալիս են խմելու:
 I Կ. ԲԱՆԱԿ. — Այս, նա ինքն ե. յեթե նրան խմեն, թե ջերմտենդը չի մոտենալ և թե հիվանդը կառողջանա:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Հանաք ես անում ինչ ե...
 I Կ. ԲԱՆԱԿ. — Զարմանալի մարդ ես, ճիշտն իմ ասում, այստեղ յերկու ամիս ե մեր կարմիր բանակայինները աշխատում են, նրանցից վոչ մեկն ել չի հիվանդանում ջերմտենդով, ինչու համար:
 II Կ. ԲԱՆԱԿ. — Նրա համար վոր մենք խինին ենք ընդունում:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Ուրեմն դուք ճիշտ եք ասում. (Ակսում ե մընել):
 I Կ. ԲԱՆԱԿ. — Ինարկե ճիշտ:
 ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Մեր խելքը չի կտրում. մեզ մոտ գլուղերում փալչի Մարգուշն ե գիր անելով ջերմը բժշկում:
 I Կ. ԲԱՆԱԿ. — (Ծիծաղելով) Գիր անելը ոգնում ե:

ԳՅՈՒՂԱԿԱՆ. — Վորտեղ ե ոգնում (իառվելով), եղ քավթառը ինձ համար ել զիր արավ ջերմտենդիս համար, յերկու հավ հիսուն ձու վերցրեց եղ ջափի համար, յես եղ փալչու աչքերը պետք ե քոռացնեմ, Յես այժմ կզնամ ձեր ասածները մեր գլուղականների ականջին կասեմ, եղ փալչի Մարգուշի ծոծրակը այժմ քոր կդա. (ոկում ե ավելի մբնել):

I կ. ԲԱՆԱԿ. — (Եռւշը նայելով) Դուրս գալու ժամանակն ե Պետրոս, եսոր բավական ե. (կանում ե բնիլիետելից) տղերք վերջացրեք, դուրս յեկեք, տուն գնալու ժամանակն ե. (Զայներ) գալիս ենք, դալիս:

(Կարմիր բանակայիները զյուղացու նետ դուրս են գալիս բեմից յեվ լսվում ե նրանց յերգը խմբովին):

Смело мы в бой пойдем

За власть советов...

(Զայները հետհետե հեռվից են լսվում, բեմը առժամանակ մնում է դատարկ, լուսինը պայծառ լույս ե տալիս, ներս են մտնում սփորված գեներալ մոծակներ, ամենքը վազում են դեպի լիճը յեվ սարսփած յետ դառնում):

I եղ ՄՈԾԱԿ. — (Զդայնացած). Գարշելի զազաններ, այստեղ ել են կերոսինով մեր իշեխաններին կոտորել:

II եղ ՄՈԾԱԿ. — (Զդայնացած) Սոսկալի ե, սարսափելի յե, յես չեմ կարող այդ տանել... իմ անգին մանուկներ, իմ քնքուշ զավակներ... ձեզ այստեղ կերոսինով են կատորում, այնտեղ զիշերամկներն են փչացնում, ագան ձկները, բադերը ձեզ կլանում, քարճիկները լցնում, կարծես թե այդ ամենը մարդու ձեռքով ե կատարվում. Ես-ես ել չեմ կարող... (լաց ե լինում):

ԶՈՐԱՊԵՏ. — (Քաղաքավարի) Տիկին, աստուծու սիրուն, հանգըստացեք, խնալցեք ձեր աչքերը

ԳԵՆԵՐԱԼ. — (Գրգոված) Դե պիտի լոեք, թե վո՞չ զահլա տարավ, առանց քեզ ել մեր սրտերը պղտորված ե:

ԶՈՐԱՊԵՏ. — (Լացակումած) Մեղավորը ինքդ յես, յես իմ տանը հանգիստ նստած ապրում ելի, բանվորի և գլուղացու վրա նստած ման ելի գալիս, ծարավ ժամանակս նրանց արլունը ծծում, մեզը ու կարագի մեջ թափալվում, իսկ քեզ չգիտեմ ստանեքքը զորտեղից բերին, դու իմ աչքերին թող փշեցիր, վոսկու սարեր խոստացար և

յես հավատացի: Ա՛խ վորտեղ ելին ես իմ քոռացած աչքերը, ինչու քեզ պես ջերգիրներին ել ես չծծեցի: ԳԵՆԵՐԱԼ. — Դու իմ դեմ ես զորապետ. յես չելի կարող յերեակալել, վոր բոլեսիկների մոտ, առանց արտասահմանի, կարող եր այդքան խինին գտնվել: Կարող ելի յերեակալել, վոր Ռուսաստանի, Անդրկովկասով բոլոր ժողովուրդները մեր գեմ դուքս կդան:

ԶՈՐԱՊԵՏ. — Լավ, չեյիր կարող նախատեսել, վոր հարկ չկար ինձ քո այդ կորստաբեր գործի մեջ քաշելու, բայ եղ քյալագուղություն չե, ինչ ե:

ԳԵՆԵՐԱԼ. Այդ ինձ խրատ կլինի ապագայում:

ԶՈՐԱՊԵՏ. — (Կատաղաբար հարձակվում ե գեներալի վրա). Խրատ, քեզ զագանակով պետք ե սովորեցնել: Դես անունն ել գեներալ ե դրել: Դու դեներալ չես, այլ ժուլիկի մեկը, ավաղակ, խաբերա: Յհտ տուր իմ թագավորությունը:

ԳԵՆԵՐԱԼ. — Գրողը քեզ տանի, ինքդ տեսնում ես վոր մենք կորել ենք, ինչպես Դեներալի Մուկվայի տակ: Պետք ե ալստեղից շուտով փախչենք:

ԵԳ ՄՈԾԱԿ. — Վայ, մեռնում եմ... ջուր...

ԶՈՐԱՊԵՏ. — (Քաղաքավարի) Համեցեք ալստեղ խոտի վրա նստեցեք:

ԳԵՆԵՐԱԼ. — (Բարկացած) Ի՞նչ եք ալալում ձգում, շուտ արեք ձանապարհ ընկնենք, մինխստրի մոտ գնանք:

ԶՈՐԱՊԵՏ. — Յես քեզ հետ կլինիմ, յես այժմ քեզանից չեմ բաժանվել տուր ինձ, ինչ վոր խոստացել ես:

ԳԵՆԵՐԱԼ. — Եդ հաշիվը ենտեղ կտեսնենք:

ԹԻԿՆԱՊԵՏ. — (Վախով) Զերդ մեծություն, զիշերամուկ ե յերկացել:

ԳԵՆԵՐԱԼ. — (Սարսափած) Այդ եր պակաս, վորքան ե այդ անիծվածը մեր մոծակներից խժուել:

ԶՈՐԱՊԵՏ. — (Սարսափած) Նա այս կազմ ե թոշում:

I եղ ՄՈԾԱԿ. — Վայ, յես մեռնում եմ:

II եղ ՄՈԾԱԿ. — (Քդավելով) Ոգնություն, ազատեցեք...

ԹԻԿՆԱՊԵՏ. — Շուտ արեք, մտեք ծատերի տակ, աստուծու սիրուն, հանդարտ, լոեցեք, վոր մեր ձայնը չլսի:

ԳԵՆԵՐԱԼ. — Վայ, յեկավ, ով հնար ունի թող փախչի, ազատվի: (Մոծակները սփորված դես ու դեն ընկնում, մտնում ե զիեւրամուկը, վորը ընկնում ե մոծակների յետելից նրանք յեվ գեներալը

փախչում են, Գիշերամուկը միքանի վարկան նայում է բեմի այս
ու այն կողը հաղթական կերպով, յեկ վառանեղ դուրս բռչում։
Բնեմը դատարկ է, նեռվից լսվում է զարմոնի ձայն, բեմի վրա դրւո
են գալիս և յեկ լի կարմիր բանակալիները յեկ զյաւղացին։

I Կ. ԲԱՆԱԿ. — Տեսմը ինչպես եր գիշերամուկը մոծակների լետե-
կեց ընկել։

II Կ. ԲԱՆԱԿ. — (Գարմոն ածելով) Տեսար ինչպես և նա մեզ ոգ-
նում մոծակների գեմ դուրս գալով. իզուր չեն ուրիշ
յերկիրներում գիշերամուկներին պաշտպանում, նրանց
բազմացնում։

I Կ. ԲԱՆԱԿ. — Մեղանում ել յեղբայր, մեր գործերը վաս չեն
գնում. մենք շուտով թե մեր յերկրի ճահիճները կչո-
րացնենք, թե մալյարի մոծակներին կփչացնենք։

II Կ. ԲԱՆԱԿ. — (Գարմոնը ածելով) Այս կփչացնենք, մոծակներից
ինչու պետք ե վախինանք։

I Կ. ԲԱՆԱԿ. — Մենք այգափիսի բաշիբուզուկներ շատ ենք տեսել
ինչպես Դենեկինին, Յուղենիչին, Կոլչակին, Վրան-
գելին, դաշնակցականների խմբապետներին, վրացի-
ների աղբբեշանի պարկապուկ գեներալներին, մենք
նրանց ջարդ ու փշուր արինք, խոլերալի բծավոր տի-
ֆի առաջը առնենք պատվաստ անելով, ջերմտենդ տա-
րածող մոծակների առաջն ել կառնենք։


II Կ. ԲԱՆԱԿ. — Իզուր չեն մեր կարմիր բանակալիների մեջ
գրագիտություն տարածում, ընդհանուր, քաղաքական
և սանիտարական ճյուղերի մասին դասեր տալիս։

I Կ. ԲԱՆԱԿ. — Հայտնի բան ե, վոր պատերազմի ժամանակ հրա-
ցան ե պետք, իսկ վարակիչ հիվանդությունների ժա-
մանակ գիտություն, լուսավորություն։

ԴՅՈՒՂԱԿԱՆ. — Ե՞ն յեղբայրներ, տեսնես յերբ կդա այն ժամա-
նակը, վոր մեր գլուզումն ել անգրագետ մարդ չի լինիր։

I Կ. ԲԱՆԱԿ. — Շուտով յեղբայր, բանվորա-գյուղացիական իշ-
խանությունը դրա համար մեծ ջանք ե թափում,
գրողներ բանում, զրուցներ, դասախոսություններ
կազմում, գրքեր, լրագիրներ տարածում, կեցցե՛ մեր
խորհրդային իշխանությունը. .

II Կ. ԲԱՆԱԿ. — (Ածում ե գարմոնը) Յերգելով յերեքը միտախն հե-
ռանում են։



ՀՀ Ազգային գրադարան



NL0322139

14. 709

ԳԻՆԸ 30 ԿՈՊ. (1³/₄ մամուկ)



М. Г. Френкеля

Союз комаров с капиталистами

Госиздат ССР Армении
Эревань — 1930